Նա և Զաղալու և Օրդակլու գիւղերի մօտ 1883 թուին գտնուած բեւեռաձեւ արձանագրութիւնքն, որք տպագրուած են նոյն թուի յունվար և դեկտեմբեր *Արարատ* ամսատետրակներում, յերես 52 և 536։ Սոյն *Տեղագիր Դվղարբունի* տպագրեցաւ 1895 թուին՝ հրամանաւ Տ. Մկրտիչ Վեհափառ Կաթուղիկոսի, որոյ մէջ են յիշեալ բեւեռագրոց թարգմանութիւնքն և տեղեկութիւնքն, առանձին գրուած գրքիս վերջումն իրրեւ յաւելուած Բ. յերես 745 - 780։

Բ. *Դաւառացոյց Նախիջեւանայ*, այն է տեղագրութիւն Նախիջեւան քաղաքի և 88 հայաբնակ և 76 օտարաբնակ (Ասորի, Մալական, Պարսիկ և Քուրդ) գիւղօրէից, սկսեալ ի 1867 ամէ՝ ի ժամանակէ յաջորդութեան իմոյ ի Նախիջեւան, որն պատրաստ է տպագրութեան։

Գ. *Կենսագրութիւն պատուարանօրէն Սմբատ Ա. Թագաւորի Հայոց Բագրատունւոյ*, «որ յետ երիցս ստանալոյ զթագ արքայական ա. ի Զափը ամիրապետէ ձեռամբ Ափշին ոստիկանի, բ. ի Լեւոն կայսրէ Յունաց, գ. ի Մօհթամէդ - Բիլլահ ամիրապետէն Հագարացւոց. իսկ ինքն Սմբատ թագ կապէ Աորբներսէհի Վրաց արքայի և Կոստանդին թագաւորին Եգերաց». (Յովհաննէս Զ. Կաթուղիկոս պատմաբան, տիպ Մոսկուայ 1853, յերես 82,88,102,106,109 և 111)։ Ասա՝ յամի Տեառն 914 նահատակեցաւ ի Յունսուի ոստիկանէ Հագարացւոց յարեւմտեան ստորոտի Երնջակայ բերդի (Խանազայ գիւղի մօտ), ուստի և բեւէին ի գլուխ բերդին եղեալ բազմութիւնն (տիկնայք նոյն իսկ թագաւորին և իշխանաց հայոց). և աստի իսկ էր ճանապարհ ելանելոյ ի գլուխ բերդին, և ի նոյն իսկ յարեւմտեան ստորոտին կան շարք գերեզմանաց և քայքայեալ և բեկեալ արձանաց, որոց՝ շրջակայ հայք անուանեն «Նահատակաց գերեզմանք», իսկ պարսիկք «Շահ Զէյիդլար»։ Զայսմանէ տես *Դաւառացոյցն Նախիջեւանայ*։

Դ. *Պատմական ժամանակագրութիւն* երեւելի գիւտից, ան-